ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
«ԾԻԱԾԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
պետական ոչ առևտրային
կազմակերպություն

"ЦИАЦАНСКАЯ СРЕДНАЯЯ
ШКОЛА " ГОСУДАРСТВЕННАЯ
НЕ ТОРГОВАЯ ОРГАНИЗАЦИЯ
РА АРМАВИР МАРЗА

Գ.Ծիածան

Հեռ.՝ 093597220

ciacandproc@mail.ru

21 օգոստոս 2024

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Դ. Խուդաթյանին

Մրցույթ՝ Արմավիրի մարզի «Ծիածանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Դասվար (17 դասաժամ), Կերպարվեստ (6 դասաժամ), Շախմատ (4 դասաժամ), Ինֆորմատիկա 7 դասաժամ ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ-ի օգոստոսի 21-ից մինչև 2024թ-ի սեպտեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթները տեղի կունենան **2024 թ. սեպտեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ին**, Արմավիրի մարզի Ծիածանի միջնակարգ դպրոցում, հասցե՝ Արմավիրի մարզ գ. Ծիածան փողոց 1: Տեղեկությունների համար զանգահարել 093-59-72-20 հեռախոսահամարով:

Տնօրենի՝ ժ/պ Կ. Հարությունյան